ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի ներքոհիշյալ բաժինների վարիչների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՆՈՐ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 23-րդ կետի՝ գիտական ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է տնօրենին, կազմակերպության գիտական խորհրդին կամ ստորաբաժանման գիտական անձնակազմին:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) պատմական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան,

բ) գիտական գործունեության առնվազն 10 տարվա փորձ,

գ) քաղվածք առաջադրման մասին որոշումից:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,

բ) ինքնակենսագրություն,

գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,

դ) երկու լուսանկար՝ ¾ չափի,

ե) քաղվածք աշխատանքային գրքույկից,

զ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

ը) հրատարակված աշխատությունների ցանկ՝ հաստատված համապատասխան կարգով:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին:

Հասցեն՝ Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 24/4, հեռախոս՝ 010581931: